

ՎԱՐԴԱՆ ՍԱԽԿԱԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՌԻԹՅԱՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Հոդվածում բացահայտվում է իրավունքի էությունը, և խորքային վերլուծության են ենթարկվում իրավունքի առարկայական-բովանդակային ասպեկտները:

Հոդվածում ձևակերպված եզրահանգումները և հետևությունները ունեն ոչ միայն գիտատեսական, այլև գործնական նշանակություն:

Հիմնաբառեր - իրավունք, իրավունքի էություն, իրավունքի բովանդակություն, անհատական շահ, հասարակական շահ, ընդհանուր բարիք, իրավահասկացություն, իրավակարգավորում:

Իրավունքի էությունը փոփոխվում է հասարակության զարգացմանը զուգահեռ: Չնայած տարբեր տեսական հայեցակարգերի որոշակի հակասությանը՝ դրանք ունեն մի շարք ընդհանուր դրույթներ. իրավունքը իրենից ներկայացնում է սոցիալական երևույթ, առանց որի անհնարին է քաղաքակիրթ հասարակության գոյությունը. իրավունքը նորմատիվային ձևով պետք է արտացոլի համայնարդկային արդարության պահանջը, ծառայի ընդհանուր հասարակական, այլ ոչ նրա առանձին համայնքների կամ սոցիալական խմբերի շահերին՝ հաշվի առնելով անձի՝ որպես հասարակության հիմքի անհատական շահերը, կարիքները. իրավունքը հանդես է գալիս որպես վարքագծի չափանիշ, կանոն, որոնք հաստատվել և պահպանվում են պետության կողմից: Այս տեսանկյունից իրավունքը իրենից ներկայացնում է ազատության և արդարության նորմատիվ կարգ:

Իրավունքի էության վերաբերյալ հարցը դիտարկվում է որպես իրավունքի տեսությունում հիմնականներից մեկի որակով: Հայտնի է, որ ցանկացած երևույթի էությունը իրենից ներկայացնում է առավել կարևոր, որոշիչ, հիմնարար, նշանակալից հատկությունների համախումբ, որոնցով ներկայացվում են դրա մնացյալ բոլոր հատկանիշները: Այս ասպեկտով իրավունքի էությունը հանդես է գալիս որպես իրավունքի գլխավոր ներքին որակական հիմք, որը արտացոլում է հասարակությունում դրա կոչումը և բնույթը:

Հարցի պատասխանը, թե ինչու են այդքան շատ գրքեր (առավել շատ՝ գիտական հոդվածներ) նվիրված իրավունքի էությանը, բավականին պարզ է: Բացի իր գիտական նշանակությունից, իրավունքի էության վերաբերյալ հարցը մինչև վերջերս ունեցել է քաղաքական մեծ նշանակություն, քանի որ այն իրավաբանական գիտության գաղափարականացման պայմաններում հանդիսանում էր սոցիա-

լիստական իրավաբանական գիտության և, այդպես կոչված, բուրժուազիայի ներկայացուցիչների սկզբունքային քաղաքական վեճի առարկա: Ընդ որում, դա սխալաստիկ վիճաբանություն չէր: Դա իսկապես իրավունքի էության հասկացությանը սկզբունքորեն երկու հակադիր մոտեցում է: «Էությունը» նշանակում է առարկայի (տվյալ դեպքում՝ իրավունքի) առավել խորը, կայուն հատկությունների համախումբ, որ սահմանում է վերջինի ծագումը, բնույթը և զարգացման ուղղությունը: Բանավեճի առարկա հանդիսանում էին իրավունքի ծագման պատճառները, դրա սահմանումը, հասարակությունTM դերը, որակական հատկանիշները և այլն: Ումանց համար իրավունքը արդարության և ազատության չափորոշիչ է, իշխանությունից մարդու պաշտպանության միջոց, մարդկային մշակույթի ձեռքբերում, մյուսների համար հասարակական հարաբերությունների դասակարգային կարգավորիչ, մեկի նկատմամբ մյուս դասակարգի գերակայման պահպանության գործիք, գերակայող դասակարգի կամքի և շահերի արտահայտող:

Արդարության համար անհրաժեշտ է նշել, որ խորհրդային իրավաբանների մեծամասնության համար իրավունքի էության նկատմամբ ազատ հայացքի ճանապարհին երկար ժամանակ հիմնական խոչընդոտը եղել է գաղափարական:

Հարյուր տարի առաջ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից վաղ կապիտալիզմի շրջանի իրավունքի էության վերաբերյալ արտահայտված դրույթը՝ «... ձեր իրավունքը հանդիսանում է միայն ձեր դասակարգի՝ օրենք դարձած կամքը», սկզբունքորեն ճիշտ էր իր ժամանակների համար: Սակայն այդ դրույթը դարձավ դոգմա «բոլոր ժամանակների» համար, չնայած դրա հեղինակները դժվար մման հույսեր ունենային: Հատկապես իրավաբանական գիտության գաղափարականացումը հանդիսացավ իրավունքի էության միակողմանի վերլուծության հիմ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նական պատճառ, քանի որ չէր կարելի հեռանալ իրավունքի էության նկատմամբ դասական մոտեցումից, հատկապես եթե դա վերաբերում էր արևմտյան երկրների իրավունքի բնութագրությանը:

Բազմաթիվ մտածողներ, փիլիսոփաներ և իրավաբաններ հնագույն ժամանակներից փորձել են վերլուծել և բացատրել այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք իրավունքի հասկացությունը, էությունը և սոցիալական նշանակությունն են: Ընդ որում, ոմանց մոտ իրավունքի ընկալումներում առկա են ընդհանրություններ, սակայն առկա էին նաև բացարձակորեն հակադիր գնահատականներ և սահմանումներ:

Դժբախտաբար, իրավունքի էության իմացության, հասարակության և առանձին մարդու կյանքում դրա նշանակության, դերի նկատմամբ մոտեցումներում հակասությունները պահպանվում են մինչև մեր ժամանակները:

Ընդ որում, նման հասկացությունը բացատրելի է: Իրավունքը խիստ նշանակալից արժեք է ժամանակակից մարդու, յուրաքանչյուր անձի համար. բարդ և խորն է դրա ազդեցությունը պետության, ամբողջ հասարակության, յուրաքանչյուր քաղաքացու կյանքում, այդ իսկ պատճառով այն չի կարող տիրապետել մեկ պարզ բացատրությամբ: Ճիշտ է գրում Գ.Վ. Մալցևը, որ «իրավունքը իմացության համար հսկայական, անսպառ երևույթ է»³: Ճշմարիտ է պրոֆեսոր Ն.Մ. Կորկունովը նրանում, որ հնարավոր է գտնել մարդու, ով իր ամբողջ կյանքում չի հետաքրքրվել պատմության կամ բնագիտության հարցերով: «Սակայն ապրել երբևէ իրավունքի հարցադրումներ չիրականացնելով՝ բացարձակորեն անիմաստ է»⁴:

Պետությունների միջազգային և ներպետական գործերում իրավունքի նշանակությունը վերջին տարիներին ոչ միայն չի նվազել, այլ էականորեն աճել է՝ չխոսելով մարդու և քաղաքացու ազատությունների և իրավունքի ապահովման համար վերջինիս նշանակության մասին:

Առաջին. տվյալ խնդիրը հանդիսանում է երկու կետային կենտրոնական իրավունքի վերաբերյալ ուսմունքներում, դրա խորը իմացությունը մեծ մասամբ կանխորոշում է իրավունքի տեսության այլ հարցերի հետագա իմացությունը, երկրորդ՝ նույնիսկ գիտությանը հայտնին անընդհատ ենթարկվում է փոփոխության՝ կապված գիտելիքների աճի, հասարակական զարգացման առաջընթացի հետ: Պատահական չէ, որ ժամանակակից գիտության բազմաթիվ ոլորտներում տեղի են ունենում սուր վիճաբանություններ, որոնք վերաբերում են ոչ միայն

գիտելիքի նոր, այլ նաև վաղուց ձևավորված ոլորտների: Լիարժեքորեն բնական է իրավաբանական գիտությանը իրավունքի էության շարունակական պարզաբանումը, քանի որ այն անդադար զարգանում և հարստանում է:

Իրավունքի էության տակ ընկալվում են իրավաբանական երևույթների այն ներքին և անհրաժեշտ, հասարակական և հիմնական, գլխավոր և կայուն գծերը, հատկանիշները և հատկությունները, որոնց միասնականությունը և փոխալայնմանավորվածությունը սահմանում են իրավունքի՝ որպես ինքնուրույն սուբստանցիայի որակական առանձնահատկությունը և զարգացման օրինաչափությունները:

Իրավունքի էությունը կազմող գծերը, հատկությունները և հատկանիշները անբաժանելի են վերջինից, անհրաժեշտաբար առկա են դրանում: Ընկալել իրավունքի էությունը՝ նշանակում է հասկանալ նաև դրա իրավական երևույթները:

Այս մեթոդաբանական պահանջը կայանում է նրանում, որ էության երևույթները պետք է վերլուծվեն հասարակական հարաբերությունների՝ որպես իրավունքի իրական գոյության գործունեության մեջ:

Չնայած երևույթից դեպի էություն տեսական մտքի շարժը հիմնականում համընկնում է էությունից դեպի երևույթ դրա շարժման հետ, չի կարելի համարել, որ իրավունքի երևույթների հետազոտությունները չեն հարստացնի դրա էության վերաբերյալ պատկերացումները, ինչն էլ կհանդիսանա, որպես ինքնուրույն սուբստանցիա, գիտական վերլուծության առարկա: Բանը նրանում է, որ իրավունքի էության խորհրդային հետազոտողների մեծամասնությունը կենտրոնացրել են ուշադրությունը կարևոր տարրի՝ պետական (կառավարող դասակարգի) կամքի վրա: Սակայն իրավունքի էության իմացությանը դիալեկտիկ մոտեցումը ենթադրում է ոչ միայն պետական կամքի, այլ նաև այլ իրավունքի էությունը սինթետիկ երևույթների և հատկությունների բացահայտում, օրինակ՝ քաղաքացիական իրավահարաբերությունների, որտեղ առաջնային հանդիսանում է ոչ թե պետության, այլ դրա սուբյեկտների կամքը⁶:

Իրավունքի էությունը ընդհանրապես չի կարող բացահայտվել մեկ կատեգորիայով. այն հնարավոր է ճանաչել և բացահայտել միայն իրավունքի իրական բնույթը վերարտադրող կատեգորիաների համակարգի օգնությամբ: Հանգեցնել իրավունքի էության և բնույթի իմացությունը սահմանմանը կամ մի քանի հատկությունների անհնարին է⁷:

Իրավունքի էության իմացության թերություն-

www.journal.lawinstitute.am

ներից մեկը հանդիսանում է այնպիսի գույգ հասկացությունների վերլուծության փոխկապվածության բացակայությունը, ինչպիսիք են «իրավունքի էությունը» և «իրավունքի երևույթը»: «Իրավունքի երևույթ» կատեգորիան գործնականում չի ուսումնասիրվել: Առկա են իրավունքի բովանդակության և ձևի, «իրավունքի պատճառների և հետևանքների» և այլ փոխկապվածությունների ուսումնասիրություններ: «Իրավունքի էություն» կատեգորիան երկար ժամանակ «միանման» էր: Միայն մեթոդաբանական շրջանառությունում դրա նկատմամբ գույգ «իրավունքի գործառույթ» հասկացության՝ որպես իրավունքի ակնհայտ երևույթներից մեկի ներածմամբ ծագեց իրավունքի էության առավել խորը իմացության հնարավորություն: «Իրավունքի էություն» կատեգորիան հանդես է գալիս որպես իրավունքի տեսության հիմնարարական հասկացություն, իսկ իրավունքի տեսության հասկացությունների շարքի համակարգը ցույց է տալիս, թե իրավունքի էությունը ինչ կերպ է արտահայտվում պատմականորեն, վերածվում նորմայի և իրավահարաբերությունների, օրինականության և իրավակարգի երևույթների, ձեռք բերում տարբեր պետական դրույթների ձևեր, հանդես գալիս իրավական կարգավորման մեխանիզմներում»⁸:

Ա.Մ. Վասիլևը չի թվում կատեգորիաների ցանկում, որոնցում արտահայտվում է իրավունքի էությունը, «իրավունքի գործառույթ» կատեգորիան հավանաբար այն պատճառով, որ այն շրջանում այն չէր զբաղեցնում պատշաճ տեղ հայրենական իրավաբանական գիտությունում: Ներկայումս այդ թերությունը կարելի է ասել, որ հաղթահարել են:

Էությունը գոյություն ունի ոչ թե որպես ինչ-որ միավոր բացարձակ բան: «Առանձին երևույթը, որը առանձնացված է որոշակի համակարգից, իրենում որևէ էություն չի պարունակում»⁹: Սակայն գոյություն ունի ոչ այլ կերպ, քան այն կապում, որը հանգեցնում է ընդհանուրին: Յուրաքանչյուր առանձին իրավական երևույթ կարող է բացահայտել իրավունքի ոչ թե ամբողջական էությունը, այլ դրա առանձին պահը, կողմը, գիծը¹⁰:

Իրավունքի և էկոնոմիկայի փոխկապվածությունների վերլուծությունը ընդգրկում է իրավունքի զարգացման վրա տնտեսության ազդեցությունը, իրավունքում տնտեսական պահերը, որպեսզի իր հերթին ցույց տա իրավունքի դերը, օրենսդրության նշանակությունը տնտեսության ամրապնդման և զարգացման համար:

Սակայն երևույթը և էությունը չեն հանդիսանում մոտ տեղակայված: Երևույթը տեղակայված չէ էության «վրայից», այլ հանդիսանում է էության

միջնորդված բնույթ, ինչպես և էությունը իրական է որպես այն, որում և երևույթը արտահայտվում է:

Էության շրջանակները ոչ մեկ անգամ և ոչ մշտական են տրված, այլ դինամիկ և փոփոխական են՝ զարգանալով տարբեր պատճառների, շարժիչ ուժերի ազդեցությամբ: Համապատասխանաբար փոփոխվում են նաև իրավունքի էության շրջանակները, քանի որ տվյալ էությունը, զարգանալով, ծնում է նոր կապեր, հարաբերություններ՝ ընդգրկելով առավել ընդարձակ երևույթներ: Տեսական հետազոտության խնդիրը կայանում է այդ նոր երևույթների և կապերի մեջ ներթափանցումը, նոր հարաբերությունների պարզաբանումը: Դրանով իսկ բացահայտվում է իրավունքի էության հարստությունը, որը առաջին հերթին ապացուցվում է իրավունքի գործունեության (ազդեցության) հետևանքով ծագող իմացական սոցիալական արժեքի փաստերով, ինչպես նաև հենց իրավունքի նոր երևույթներով, որոնք ունենում են որոշակի փոփոխություններ այս կամ այն սոցիալական գործոնների զարգացման, ազդեցության ներքո: Իրավունքի էության հարստացման, զարգացման այս գործընթացը անվերջանալի է, անսպառ, անընդհատ: Նույն կերպ անընդհատ պետք է լինի նաև դրա իմացությունը, այդ իսկ պատճառով, հետազոտելով իրավունքի էությունը, անհրաժեշտ է անվերջանալի խորանալ «երևույթից դեպի էություն, այսպես ասած, առաջին կարգի էությունից դեպի երկրորդ կարգի էությունը և այդպես անվերջ»¹¹:

Իմացությունը կարևոր է իրավունքի էության, իրավունքի իմացության, իրավունքի կապերի և երևույթների խորացված աստիճանի ձեռքբերումն է: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ էության կողմերից մեկը, որը ազդում է հասարակական հարաբերությունների վրա, հանդիսանում է իրավունքի գործառույթը: Գործառույթը իրավունքի էության ընդլայնումն է հասարակական հարաբերություններում:

Ըստ Գ.Ա. Կերիմովի կարծիքի՝ «իրավունքի էություն» և «իրավունքի երևույթ» կատեգորիաները տարբերվում են նրանով, որ իրավունքի էությունը արտահայտում է իրավական գործունեության զարգացման ընդհանուր օրինաչափությունները, իսկ մնացյալ առանձին երևույթները արտահայտում են միայն դրանց զարգացման առանձնահատուկ օրինաչափությունները. իրավունքի էությունում իրավական երևույթները ներկայացված են իրենց միասնությունում բոլոր հիմնական, էական, գլխավոր գծերով այն դեպքում, երբ առանձին իրավական երևույթներ, բացի դրանից, պարունակում են նաև ոչ հիմնական, ոչ էական, ոչ գլխավոր խմ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բերը, իրավունքի էությունում ներառվում են ինչ-որ ներքինը, խորքայինը, անհրաժեշտը, իսկ իրավունքի երևույթը հաճախ ներառում է արտաքինը, մակերեսայինը և նույնիսկ պատահականը, իրավունքի էությունը կայուն է, հանգիստ, հաստատուն, երևույթը առավել դինամիկ է, շարժուն, փոփոխական, էությունը ծառայում է իրավական երևույթների խտացված արտահայտումներին, իսկ վերջինները կարող են ուղղակի և անմիջականորեն հանդես գալ ինքներն իրենց:

Արդարացի է հարց առաջադրել. ինչպիսի՞նք է իրավունքի երևույթներով դրա էության արտացոլման աստիճանը: Կամ ինչպիսի՞նք է իրավունքի էության արտահայտումը իր երևույթներում:

Քանի որ իրավունքի արտահայտումները բազմանշանակ են, տարբեր, ապա դրանց կողմից նաև էության արտացոլումները պետք է համապատասխանի դրանց փաստացի նշանակությանը: Եթե իրավունքի նորմերում արտահայտվում է միայն էության մասնիկը, պահը¹², ապա, օրինակ, իրավունքի ոլորտում կամ գործառույթի մեջ արտահայտվում է իրավունքի էության բավականին ընդարձակ կողմը, դրա էական հատվածը: Իրավունքի էության հետ անխզելիորեն կապված է նրա բովանդակությունը: Ի.Վ. Միխայլովսկին XX դարի սկզբում կոչ էր անում հատկացնել անհրաժեշտ ուշադրություն իրավունքի բովանդակության հետազոտությանը: «Մեր գիտությունը, - գրում է նա, - չի կարող սահմանափակվել իրավական նորմերի միայն ֆորմալ հատկանիշներով: Այդ իսկ պատճառով մենք պետք է սկսենք ուսումնասիրել իրավական նորմերի բովանդակությունը իրավունքի ներքին բնույթի, էության բացահայտման համար»¹³:

Սակայն, եթե իրավունքի էության վերաբերյալ հարցը ուսումնասիրվել է առավել պակաս ջանասիրաբար, ապա իրավունքի բովանդակության իմացությունը ձեռք էր բերվում դժվարությամբ¹⁴: Ըստ երևույթին այդ իսկ պատճառով իրավաբանական գրականությունում ի հայտ եկան սկեսպտիկ եզրակացություններ իրավունքի բովանդակության իմացության նպատակահարմարության վերաբերյալ: Այսպես, պրոֆեսոր Գ.Ֆ. Շերշենևիչը պնդում է, որ ընդհանրապես հնարավոր չէ գտնել իրավունքի տարբերակիչ հատկանիշ իր բովանդակությունում: «Այդ իսկ պատճառով, - գրում է նա, - բովանդակությունից անհրաժեշտ է դիմել իրավունքի ֆորմալ կողմին»¹⁵:

Հետագա տարիներին գիտնականները, ովքեր ուսումնասիրում էին իրավունքի տեսությունը, բազմակի դիմել են իրավունքի բովանդակության ուսումնասիրության խնդրին, սակայն չեն հանգել

դրա սահմանման մեջ միասնական եզրակացության:

Ն.Գ. Ալեքսանդրովը իրավունքի բովանդակություն համարում էր վերջինի կողմից արտացոլվող հասարակական հարաբերությունների բովանդակությունը և դրանում ամփոփվող դասակարգային կամային պահը¹⁶:

Ս.Ն. Բրատուսը տվել է իրավունքի բովանդակության առավել ծավալուն բնութագրություն՝ կապելով այն հասարակության տնտեսական պահանջների, իշխող դասակարգի կամքի և այլնի հետ¹⁷:

Գ.Ա. Կերիմովը առաջարկում է համարել իրավունքի բովանդակություն օրենսդրի գիտակցությունում ձևափոխված օբյեկտիվ իրականության գործոնների համախումբը, որը առաջացնում է իրավական նորմերի ընդունման անհրաժեշտություն: Նա համարում է իրավունքի փաստացի բովանդակություն դասակարգային-կամային, պետական-կամային պարունակությունը՝ արտացոլված իրավական համակարգում¹⁸:

Գ.Ա. Բելովը համարում է, որ իրավունքի բովանդակությունում ներառվում են իրավունքի նորմաները, սկզբունքները և մնացյալ բոլոր համընդհանուր պարտադիր դրույթները, որոնք որոշակի դեր են խաղում իրավական կարգավորման մեջ: Ըստ նրա կարծիքի՝ բովանդակության հիմք կազմում են իրավունքի սկզբունքները: Եթե էության վերլուծությունը, գրում է նա, պատասխանում է հարցին, թե ում շահերից է ստեղծված և գործում իրավունքը, ապա բովանդակության վերլուծությունը հնարավորություն է տալիս հաստատել, թե իրավունքում կոնկրետ ինչպես են արտացոլված իրական հարաբերությունները: Իրավունքի բովանդակությունում արտացոլվում են իրավական կարգավորման այն գործնական խնդիրները, որոնք ծագում են հասարակության առջև վերջինիս զարգացման կոնկրետ փուլում¹⁹:

Իրավունքի բովանդակության վերաբերյալ իրենց տեսանկյունն են արտահայտել Ս.Ս. Ալեքսեևը, Օ.Ս. Իոսիֆը, Լ.Ս. Յավիչը, Վ.Ա. Կուչինսկին, Բ.Վ. Շեյնդլինը և այլ հեղինակներ²⁰: Այս խնդրին դիմել են նաև իրավունքի բովանդակության ձևի հետազոտողները: Վերջին տարիների աշխատանքներից անհրաժեշտ է նշել Վ.Ա. Տոլստիկի և Ն.Ա. Տրուսովի «Իրավունքի բովանդակության համար պայքարը» հետաքրքրական հետազոտությունը և նշված հոդվածը²¹:

Ժամանակակից իրավաբանական գրականությունում իրավունքի բովանդակության խնդրին հատկացվել է բավականին մեծ ուշադրություն:

Ս.Ս. Ալեքսեևը իրավունքի բովանդակության տակ ընկալում է իրավունքի նորմերը, անհատական հանձնարարականները, սանկցիաները, պաշտպանական միջոցները, իրավական փաստերը և իրավական իրականության այլ երևույթներ²² :

Այս տեսակետին որոշակի ճշգրտմամբ հետևում է Վ.Ն. Կարտաշովը՝ միևնույն ժամանակ ավելացնելով իրավունքի սկզբունքները և իրավական սահմանումները²³ :

Վ.Ա. Տոլստիկը և Ն.Ա. Տրուսովը համարում են, որ իրավունքի բովանդակության տակ անհրաժեշտ է հասկանալ իրավունքի նորմերը: Միևնույն ժամանակ իրավունքի նորմերը նրանք կապում են իրավաստեղծ սուբյեկտների կամքի և շահերի հետ²⁴ :

Մեր կարծիքով, դիտարկելով իրավունքի բովանդակության խնդիրը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն վերջնական արդյունքում ենթադրվում է սոցիալ-տնտեսական և հասարակական զարգացման խորքային գործընթացներով՝ արտադրական հարաբերությունների տիպով, դասակարգային ուժերի բաշխմամբ (հակամարտություն, սոցիալական փոխզիջում և այլն), որոնք ստացել են արտացոլում իրավունքում տարատեսակ իրավական դրույթների ձևով:

Եթե առարկայի էության տակ ընկալվում է վերջինի բնույթը սահմանող առավելագույն կարևոր հատկությունները, ապա բովանդակու-

թյան տակ ընկալվում է առարկայի էության կոնկրետ արտահայտումը, որը արտացոլվում է վերջինիս բոլոր տարրերում, փոխազդում միմյանց, ինչպես նաև շրջակա միջավայրի հետ (հասարակական պայմաններ, որոնցում գործում է իրավունքը): Իրավունքի բովանդակությունը՝ որպես դրա էության կոնկրետացված հարստացում, իրենում ներառում է գործընթացներ, որոնք կապված են հասարակական հարաբերությունների վրա դրա ազդեցությամբ:

Իրավունքի բովանդակությունում ներառվում է նաև դրա նորմերով նախատեսված մարդկանց հնարավոր և պատշաճ վարքագիծը: Պետության և իրավունքի ընդհանուր տեսության չորս հատորանի դասընթացի հեղինակները որպես դրանից եզրակացություն ընդունում են, որ իրավունքի բովանդակությունը ներառվում է վերջինի կարգավորիչ գործառույթը՝ հասարակական հարաբերությունների վրա ազդեցությունը, որը իրականացվում է մարդկանց վարքագծի վրա ազդեցության ուղիով²⁵ : Նույն տեղում նշվում է, որ իրավունքի բովանդակությունում պետք չէ ներառել բացարձակորեն բոլոր նյութական և գաղափարական հարաբերությունները, որոնք սահմանում են իրավունքի ծագումն ու զարգացումը և փոխազդում դրա հետ:

¹ Տե՛ս Общая теория государства и права. Академический курс в трех томах. Отв. ред. профессор М.Н. Марченко.

Том 2. Право. М., 2007, С. 59-60.

² Տե՛ս Захаров С.И. Некоторые проблемы теории и философии права. М., 2014, С. 44-45.

³ Տե՛ս Мальцев Г. В. Понимание права. Подходы и проблемы. М., 1999, С. 3.

⁴ Տե՛ս Коркунов Н. М. Лекции по общей теории права. 2005, С. 7.

⁵ Տե՛ս Керимов Д. А. Избранные произведения. Т. 1. М., 2007, С. 259.

⁶ Տե՛ս Социология права. Курс лекций. Том 1. Отв. ред. профессор М.Н. Марченко. М., 2015. С. 171-172.

⁷ Տե՛ս Малахов В. П. Философия права. М., 2008, С. 31.

⁸ Տե՛ս Васильев А. М. Диалектическая связь категорий общей теории права //Сов. государство и право. 1974, N1, С. 13-14.

⁹ О некоторых особенностях познания сущности / Методологические проблемы современной науки. М., 1970, С. 351.

¹⁰ Տե՛ս Керимов Д.А. Методология права: Предмет, функции, проблемы философии права. 4-е изд. М., 2008, С. 154-155.

¹¹ Տե՛ս Керимов Д.А. Նշվ. աշխ., էջ 171-172.

¹² Տե՛ս Керимов Д.А. Նշվ. աշխ., էջ 173.

¹³ Տե՛ս Михайловский И. В. Очерки философии права. Т. 1. Томск. 1914, С. 77.

¹⁴ Տե՛ս Толстик В.А., Трусов Н.А. Понятие содержания права //Государство и право. 2014, N6, С. 5-13.

¹⁵ Курс гражданского права. Введение. Т. 1. Вып. 1. Лазань, 1901. С. 4.

- ¹⁶ Տի՛ւ Ալեքսանդրով Ն. Գ. Сущность права. М., 1950. С. 11.
¹⁷ Տի՛ւ Բրատսկի Ս. Ն. Юридические лица в советском гражданском праве. М., 1947.
¹⁸ Տի՛ւ Կերիմով Դ.Ա. Методология права, С. 156-157.
¹⁹ Տի՛ւ Բելով Գ.Ա. О содержании и форме социалистического права. Сов. государство и право. 1964. N 12, С. 86.
²⁰ Այդ աշխատանքների վերլուծությունը. Կերիմով Դ.Ա. Философские проблемы права. М., 1972.
²¹ Տի՛ւ Թոլստիկ Վ. А., Трусов Н. А. Борьба за содержания права. Н. Новгород. 2008.
²² Տի՛ւ Ալեքսեև Ս. С. Общая теория права. М., 2009. С. 74.
²³ Տի՛ւ Կարգашով Վ. Н. Теория правовой системы. Ярославль. 2005. С. 96.
²⁴ Տի՛ւ Թոլստիկ Վ. А., Трусов Н. А. Борба за содержание права. С. 45.
²⁵ Տի՛ւ Մարքսիստեկո-լենինյան ընդհանուր տեսությունը և իրավունքի: Մասնավորապես ինստիտուտները և հասկացությունները. С. 378.

Վարդան Սախկալյան
 Аспирант Института философии,
 социологии и права НАН РА

ՔԵԶԻՍՄԵ

Ասպեկտներ սուբստանսիայի և բովանդակության իրավունքի

Վ данной научной статье раскрывается сущность права и основополагающим образом анализируются предметно-содержательные аспекты права.

Сформулированные в статье результаты и выводы имеют не только научное, но и практическое значение.

Կլյուչևые սլո՜վա: *իրավունք, սուբստանսիայի իրավունք, բովանդակություն իրավունքի, անհատական ինտերես, ընդհանուր ինտերես, իրավաբանական, իրավունքի կարգավորում.*

Vardan Sakhkalyan
 PhD Student of the Institute of Philosophy,
 Sociology and Law NAS RA

SUMMARY

Aspects of the nature and content of the law

In this scientific article the author revealed the essence of the law and fundamental way analyzed in detail substantial aspects of law.

Formulated in an article the results and conclusions are not only scientific but also practical significance.

Keywords: *law, the essence of the law, the content of the law, individual interest, common interest, legal thinking, legal regulation.*